«ՄԱՆԿԱՆԸ ԲԱՐԵԿԱՄ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Պողոսյան Կ.Պ.[1], Հարությունյան Ս.Ա.[1], Վարդազարյան Հ.Ժ.[2]

[1] Երևանի Մ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի մանկաբուժության և մանկական վիրաբուժության թիվ 2 ամբիոն, Երևան, Հայաստան

[2] Ս. Ավդալբեկյանի անվան ՀՀ Ազգային առողջության ինստիտուտ, Երևան, Հայաստան

Վաղ տարիքի երեխաների առողջության բարելավմանն ուղղված միջոցառումների շարքում ամենաարդյունավետներից մեկը սնուցման գործելակերպի բարելավումն է: Կրծքով սնուցման ցուցանիշի բարձրացման և համապատասխան հավելյալ սնուցումը ժամանակին սկսելու շնորհիվ կարելի է զգալի նվազեցնել մանկական հիվանդացության և մահացության ցուցանիշները: Ընդհանրապես, ծննդատներում կիրառվող առողջապահական գործելակերպերը զգալի ազդում են կրծքով սնուցման ցուցանիշների վրա: Ներկայումս կիրառվող գործելակերպերը բարելավելու և խնամքի նոր՝ կրծքով սնուցմանը նպաստող ստանդարտներ ներդնելու նպատակով, ԱՀԿ-ն և ՅՈՒՆԻՍԵՖ-ը 1992 թ. ստեղծեցին «Մանկանը բարեկամ ծննդատներ» նախաձեռնությունը, որի հիմքում ընկած են կրծքով բարեհաջող սնուցման 10 քայլերը:

Հայաստանում այդ նախաձեռնության ներդրումը սկսվել է 1999 թվականին: Ներկայումս 19 ծննդատների շնորհվել է «Մանկանը բարեկամ ծննդատուն» կոչումը:

Որպեսզի կրծքով սնուցմանն աջակցությունը շարունակվի նաև ծննդատնից դուրս գրվելուց հետո, ՀՀ-ում 2003 թվականին ներդրվեց «Մանկանը բարեկամ պոլիկլինիկաներ» նոր նախաձեռնություն, որը ԱՀԿ-ի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից առաջարկված 10 քայլերի ձևափոխված տարբերակն է: «Մանկանը բարեկամ պոլիկլինիկաներ» նախաձեռնությունը ներառում է հավելյալ և ապահով ու համապատասխան արհեստական սնուցմանն առնչվող քայլեր: Քայլերից մեկը վերաբերում է «Կրծքի կաթի փոխարինիչների վաճառահանման միջազգային օրենսգրքի» դրույթների պահպանմանը:

Հայաստանում «Մանկանը բարեկամ պոլիկլինիկաներ» նախաձեռնության ներդրումը սկսվել է 2003 թվականին և ներկայումս 9 պոլիկլինիկաների շնորհվել է այդ կոչումը:

Կրծքով սնուցման ցուցանիշների վիճակագրական վերլուծությունը վկայում է ծննդատներում և պոլիկլինիկաներում վերը նշված նախաձեռնությունների զուգահեռ ներդրման արդյունավետության մասին:

OFFICIAL PUBLICATION OF THE YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY